

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՋԵՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

(Հովսեփ Օրբելու ծննդյան 110-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հովսեփ Աբգարի Օրբելին պապից ժառանգել էր ազգային ինքնաճանաչման մղում, իրավաբան հորից՝ արդարամիտ և արդարադատ լինելու կարողություն, բժիշկ հորեղբայրներից՝ մասնագիտական նվիրում: Արդության-Նրկայնաբազուկ մայրը որդուն էր փոխանցել ազնվականի արժանապատվություն, և այդ ամենին գումարովել էր Թիֆլիսի գիմնազիայից ու մասնավոր դասառումներից ստացած դասական և այլ լեզուների իմացությունը:

Տասնյոթամյա Հ. Օրբելին հայտնվեց Պետերբուրգի համալսարանի դասական բանասիրության և արևելագիտական ֆակուլտետներում միաժամանակ: Մասնագիտական կրկնակ համատեղումը, բացի քաղաքակրթության պատմության լայն ճանաչում ընձեռելուց, գիտության երիտասարդ հավատավորին հնարավորություն էր տալիս դասական բանասիրության հետազոտական կայուն մեթոդները կիրառել արևելագիտական խնդիրներին վերաբերող պրպտումներ կատարելիս: Հայ-վրացական բանասիրության նոր դրպրոցի հիմնադիր ակադ. Ն. Մառն ինքն արդեն հասցրել էր հիմնարար մի քանի տասնյակ աշխատություններով վերանայել Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների ստեղծած մշակութային ժառանգության ավանդական դարձած տարբերակումը, և Հ. Օրբելու հետաքրքրությունները ձևավորվում էին նրա աշխատանքում: Պետերբուրգյան արևելագիտական դպրոցում փոխվել էր նաև հայագիտության ընդգրկումների և հնարավորությունների պատկերացումը. եթե Մ. Բրոսեի և Ք. Պատկանյանի ժամանակներում այն գերազանցապես աղբյուրներ էր հայթայթում այլ բնագավառների հարուցած խնդիրներին, ապա Ն. Մառն ու իր ավագ սերնդի աշակերտները (Ն. Ադոնց, Իվ. Ջավախիշվիլի) այն դիտում էին ստեղծող ժողովրդի պատմության ու մշակույթի շարունակականության կտրվածքով, զարգացման ներքին օրինաչափություններով ու ազդեցություն-փոխազդեցությունների համակարգում: Այդ նշանակում է, թե քրիստոնյա—մահմեդական, Արևելք—Արևմուտք և նույնիսկ մայրաքաղաք—ժայռագավառ հասկացությունները նշանակալի շափով դարձել էին պայմանական:

Ահա, հետազոտական աշխատանքի այս նոր սկզբունքներին հետևելով էր, որ Հովսեփ Օրբելին սկսեց զբաղվել ազգագրական-ազգաբանական հարցերով: Նրա դիպլոմային աշխատանքի թեման էր Կովկասի ժողովուրդների մասին պատմող դասական (հունա-լատինական) հեղինակների տեղեկությունների ուսումնասիրությունը: Ի տարբերություն պատմական ազգաբանության, որի կատարման հիմնական մեթոդը աղբյուրագիտական է, վերջին կուրսերի ուսանող Հ. Օրբելին հանձնառություն ուներ տեղում՝ կենդանի միջավայրում

ուսումնասիրելու Հարավային Հայաստանի սակավ ճանաչելի Մոկաց աշխարհը՝ իր բարբառով, նիստուկացով, սովորություններով, բանահյուսությամբ, միջէթնիկ վերաբերումներով: Նա ստուգում ու սրբագրում էր տեղում, մշակում աշխատանքային ուրույն ծրագիր, նույնիսկ այբբենական առանձնահատուկ համակարգ՝ բարբառի հնչյունական հարստությունը գրանցելու համար:

Օրբելին ուսանողական տարիներից արդեն Ն. Մառին հետևեց նաև հնագիտության մարզում: Վստահաբար կարելի է ասել, որ Անիի պեղումները հավասարապես և՛ համալսարանական նոր ուսումնառություն էին, և՛ ակադեմիական հետազոտության եղանակ: Այդ պեղումները նախ կոչված էին պատասխանելու Հայաստանե, Կովկասի ու հարակից տարածքներում եղած պետական կազմավորումների պատմության (քաղաքական, տնտեսական, սոցիալական միջէթնիկ և այլն) ծրագրված հարցերին, որոնք բավարար արտացոլում չէին գտել ժամանակի պատմողական աղբյուրներում: Նույնքան կարևոր տեղ էր հատկացվում միջնադարյան Հայաստանի շինարվեստի, մշակութային մյուս բնագավառների պատմության ծայրերի հետազոտությանը: Եվ պեղումների կազմակերպիչն ու անփոխարինելի ղեկավարը իր աշխատակիցներից յուրաքանչյուրին՝ ըստ պատրաստության ու կարողության, հանձնարարել էր խիստ մասնագիտացված աշխատանք: Հովսեփ Օրբելին, մասնավորապես, պիտի վարեր թանգարանային աշխատանքը (և՛ պեղածո նյութի հաշվառում, և՛ նկարագրում, սիստեմատիկ խմբավորում, պահպանություն և հետազոտություն):


1906-ից Օրբելին սկսեց վիճագրերի դիվանի հատորի պատրաստումը (հետագայում հրատարակությանը անուրանալի օժանդակություն և մասնակցություն բերեց վիճագրագետ-հայագետ Սեդրակ Բարխուդարյանը): Վիճագրերի վերծանության ու հրատարակության սկզբունքները մշակել էր Ն. Մառը և նա էլ մտադիր էր կազմել ենթադրելի դիվանը, բայց երբ Հ. Օրբելին վերծանեց ու քննության առավ Բագարանի, Բագավանի, Արուճի, Նախճավանի, Մրենի, Մարմաշենի, Կարսի և այլ հնավայրերի ու կոթողների վիճագիր հիշատակարանները, Ն. Մառն այլևս հրաժարվեց իր կատարելիքից՝ այն հանձնարարելով Հովսեփ Օրբելին:

Հ. Օրբելին մեզանում առաջիններից էր, որ ուսումնասիրության բնագավառ ընտրեց արվեստի պատմությունը: Այս մարզում նա խոշորագույն արվեստաբան ակադ. Յա. Սմիռնովի ավանդների շարունակողն ու զարգացնողն էր, երախտաշատ Գարեգին Հովսեփյանի զուգակշիռը:

Նա զգալի աշխատանք կատարեց նաև աղբյուրագիտական-բնադրագիտական ուսումնասիրությունների բնագավառում: Եղիշեի և Փարպեցու Պատմությունների կիսավարտ ուսերեն թարգմանությունները հուշում են, թե ձեռնարկողը գրաբար բնագրի նրբին ընկալում ունի և այն ուսերենի վերածելու առանձնաշնորհ կարողություն: Թեկուղ միայն Թովմա Արծրունու նկարագրության հիմամբ Աղթամարի չպահպանված պալատի ճարտարապետական մանրամասների նյութեղեն պատկերացումը, ապա վերլուծությունը բավական է, որպեսզի այսօր մենք Հ. Օրբելու բնագրագիտական հիմնական մասին դրվատական խոսք ասելու պարտավորություն ունենանք:

Արևելագիտության մեկ այլ բնագավառ ևս կա, ուր մեր անվանի հայրենակցի ծառայություններն իրապես հիմնարար են: Դասական արևելագի-

տուժյունը քրդագիտական խնդիրներին անդրադառնում էր շատ հազվադեպ և գերազանցապես իրանագիտության հարուցած հարցերի առնչությամբ: Մոկսի բարբառն ու ազդագրությունը ուսումնասիրելիս Հ. Օրբելին համոզվեց, որ տեղիս հայոց բանահյուսության, ուրեմն և լեզվի ուսումնասիրությունը քրդերենի ծանոթություն է պահանջում: Եվ այսպես, նա աստիճանաբար ճանաչեց այդ լեզուն, լրացրեց ձեռքի տակ եղած քրդերենի բառարանը, ի մոտո տեսավ ու գնահատեց քուրդ ժողովրդի կենցաղը, մանավանդ ընտանեկան ու սոցիալական սովորությունները, հարուստ բանահյուսությունը և ռուսական ակադեմիական շրջանակներին փաստեց քրդագիտական հետազոտությունների կարևորությունը:



1924 թ. Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի «Հնագիտություն և արվեստի պատմություն» մասնագիտությամբ թղթակից անդամի թափուր տեղի համար Հովսեփ Օրբելու թեկնածությունը ներկայացնելիս երևելի գիտնականներ Ն. Մառը, Ս. Օլդենբուրգը և Ի. Կրաչկովսկին գրում էին. «Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր, Պետական էրմիտաժի տնօրենի օգնական Հ. Ա. Օրբելին երկյակ դպրոց է անցել՝ դասական և արևելագիտական: Արևելագիտականը անցել է նոր ուղղության՝ հայ-վրացական բանասիրության մարզում, որ բնութագրվում է հայագիտական և վրացագիտական հետաքրքրությունների ընդհանրության լուսաբանմամբ, նրանց հիմունքի միասնականությամբ, Կովկասի մշակույթի ամբողջականությամբ, ինչը պայմանավորված է արևելյան մշակութային հոսանքների (այդ թվում և մուսուլմանական) արևմտյան՝ բյուզանդական-հունականի հետ խաչավորման ինքնօրինականությամբ: Հ. Ա. Օրբելին հաղորդակցվեց պետերբուրգյան կովկասա-

գիտական դպրոցի նյութական հիմքի վրա կառուցված իմացություններին, և ինքն ընդլայնեց այդ հիմքը ազգաբանական աշխատանքի, մասնավորապես՝ կովկասի կենցաղային հնագիտության և ազգագրության համար շահագնաց կարևոր քրդագիտությամբ: Իրենց հնագիտական հետաքրքրությամբ հայտնի մասնագետների ձեռքի տակ անցած դասական բանասիրական դպրոցը ի սկզբանե կողմնորոշել է նրա մասնագիտացման հակումը դեպի վիճագրագիտություն ու առարկայականություն»:

Ժամանակի թելադրանքով այսօր մասամբ խրթին թվացող սույն բնութագրությունը գիտական դպրոցի ձևավորման և նրա բուն խնդիրների ու հետազոտական մեթոդների վերլուծությամբ միանգամայն ճշմարիտ է ու սպառիչ:

Հովսեփ Օրբելու անհատականության շատ դրսևորումներ անհասկանալի կմնան, եթե մենք նկատի չունենանք նրա գիտակազմակերպչական ծառայությունները: Անխիթ թանգարանի երբեմնի ավանդապահը մխիթարվեց էրմիտաժի արևելյան բաժինը կազմավորելով, տեղում ու այլ երկրներում Արևելքի մշակույթներին նվիրված ցուցահանդես-հետազոտություններ կազմակերպելով, ի վերջո՝ երկար տարիներ այդ խոշորագույն թանգարանի տնօրինությունը վարելով:

Ճակատագիրը նրան էր վիճակել խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի հայկական բաժանմունքի (ֆիլիալ) վերակազմավորմամբ ստեղծված Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անդրանիկ նախագահը լինելու պատիվը՝ օժանդակ ու ժառանգորդ ունենալով Մեծն Վիկտոր Համբարձումյանը:

Օրբելու և Համբարձումյանի համատեղ ու համերաշխ աշխատանքի շնորհիվ Հայաստանի Գիտությունների ակադեմիան շուտով դարձավ խորհրդային Միության առաջնակարգ ակադեմիաներից մեկը:

2. Օրբելու գիտակազմակերպչական գործունեության մասին վկայող բազմաթիվ իրողություններից հիշատակելի են մանավանդ քաղաքակրթական-մշակութային կարևոր իրադարձությունների տարելիցներին ու դարալիցներին նվիրված գիտական նստաշրջաններ, հոբելյանական ժողովածուներ, հրապարակային ելույթներ, ցուցահանդեսներ կազմակերպելու և միայն իրեն հատուկ հմտությամբ վարելու տպավորիչ փաստերը: Հայոց հերոսական էպոսին՝ «Սասնա Մոերին» նվիրված հանդիսությունների օրերին նա ոչ միայն բազմաթիվ դասախոսություններ կարդաց, համահավաք բնագիր կազմող մասնագիտական խումբ գլխավորեց, այլև մենագրական աշխատությամբ բացահայտեց էպոսի առարկայական ակնարկները, ժողովրդագրական-պատմական վկայությունները, առավել ևս՝ հերոսական ոգու դրսևորումները: Հայոց ազգային արժեքները միջազգային հանրությանը ներկայացնելու առումով ևս «Սասնա Մոերի» հոբելյանը պարտավորեցնող նախադեպ էր, հետազոտական հրահրում, հերոսականության-հայրենասիրության ներբողում, որ տեղի էր ունենում Հայրենական պատերազմի նախօրեին («Հայրենական» որակումը ամենևին ենթակա չէ վերանայման՝ քաղաքական իրադարձությունները մեզ ուր էլ հրեն): Այդ նույնը վերաբերում է նաև Ռուսթավելու «Քենձենավորի» ստեղծման հոբելյանը կազմակերպելուն: Բացի հանդիսություններից ու ցուցահանդեսներից, Օրբելին կազմեց ու խմբագրեց «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձանները» ընդգրկուն ժողովածուն, որ այսօր

էլ մասնագիտական գրականության մեջ հաճախ է հիշատակվում: Ի դեպ, հոդվածներից մի քանիսի հեղինակը խմբագիրն ինքն է:

Ժամանակակիցներն ու մասնակիցները զարմանքով ու խանդաղատանքով են հիշում, թե ինչպես պատերազմական օղակի մեջ առնված Լենինգրադում, էրմիտաժի նկուղային հարկում, Հովսեփ Օրբելին նավորին ու Գյանջևիին նվիրված գիտական նստաշրջան էր կազմակերպում, առանձին զեկուցողներ նույնիսկ ռազմաճակատից բերել տալով:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ կյանքի ու մահվան կռիվ էր մղվում հիտլերյան ֆաշիզմի դեմ, Օրբելին, որպես ջերմ հայրենասեր ու համոզված ինտերնացիոնալիստ, բազմիցս դիմել է խորհրդային զինվորներին՝ կոչ անելով ինքնամոռաց կերպով պաշտպանել Հայրենիքը: Ինքն էլ երկար ժամանակ մնացել և աշխատել է շրջափակված քաղաքում, իսկ հաղթանակից հետո որպես մեղադրող մասնակցել է նյուրնբերգյան հայտնի դատավարությանը:

Հովսեփ Օրբելին անկրկնելի ճարտասան էր, անմնացորդ հայրենասեր, սկզբունքային ու անմիջական, նախասիրությունների մեջ թուրրանվեր, հավատարմության խնդրում անձնազոհ, պահանջկոտ և բնավ ոչ հիշաչաբ:

Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու հարուստ գիտական ժառանգության միայն մի մասն է հրապարակված: Գիտնականի արխիվը, ինչպես և նրա մի շարք մենագրությունների հեղինակակից Կ. Վ. Տրևերինը, հիմնավոր գիտական նկարագրության, իսկ «Մոկսի ազգագրության նյութերի» հատորը և «Քրդերեն-ռուսերեն բառարանը» ակադեմիական հրատարակության կարիք ունեն: Ուզում ենք հուսալ, որ Օրբելի եղբայրների Մաղկաձորում ստեղծված թանգարանը ժամանակի ընթացքում կիրականացնի այդ ամենը:

ВЫДАЮЩИЙСЯ УЧЕНЫЙ И ПЛАМЕННЫЙ ПАТРИОТ

(К 110-летию со дня рождения Иосифа Орбели)

Доктор ист. наук П. М. МУРАДЯН

Р е з ю м е

Иосиф Абгарович Орбели унаследовал от своего деда национальное самосознание, от отца-юриста—стремление к справедливости, его мать из рода Аргутинских-Долгоруковых наделила сына дворянским благородством и достоинством. Учеба в Тифлисской гимназии и частные занятия дали ему блестящее знание классических языков. С таким багажом 17-летний Иосиф Орбели поступает в Петербургский университет сразу на два факультета—классической филологии и восточный. Дипломной работой его стало исследование сведений классических авторов о народах Кавказа. Уже со студенческой скамьи Орбели стал учеником и последователем Н. Марра в области археологии, участвовал в раскопках Ани. С 1909 г. И. Орбели начал составлять свод армянской эпиграфики. Он занимался исследованием истории искусства, продолжая вместе с Г. Овсепяном традиции школы крупнейшего искусствоведа Я. Смирнова. К 1924 г. были опубликованы результаты научных изысканий И. Орбели по археологии (Ани, Ван), этнографии (Мокс), эпиграфике (надписи Багавана, Багарана, Карса, Мармашена, Мрена, Нахчавана, Эчмиадзина и т. д.), искусству (предметы из Ани, Арцаха) и филологии (разыскания по данным греко-латинских источников, перевод «Задачника» Ширакаци). Научные экспедиции в Дагестан, раскопки замка Амберд, труды по сасанидскому и сельджукскому искусству, переводы сочинений Егише и Парпеци, баен Мхитара Гоша и их монографическое

исследование, разыскания по армянскому героическому эпосу и руствелологии и, наконец, составленный им фундаментальный «Свод эпиграфики Ани» существенно обогатили отечественную академическую науку. Будучи директором Эрмитажа, Иосиф Абгарович организовывал тематические выставки, научные сессии, конференции и конгрессы, а в годы Великой Отечественной войны лично руководил эвакуацией сокровищницы. Горячий патриот, убежденный интернационалист, прирожденный яркий оратор, во время войны он призывал воинов самоотверженно защищать Родину, сам долгое время оставался и работал в осажденном Ленинграде, а после победы в качестве обвинителя участвовал в Нюрнбергском процессе. И. Орбели руководил Восточным факультетом Ленинградского университета, основал Ленинградское отделение Института востоковедения АН СССР. Он был организатором и первым президентом Академии наук Армении. Иосиф Абгарович был необыкновенно яркой личностью—неповторимый оратор, подлинный патриот, принципиальный и непосредственный, самоотверженно преданный своему делу, резкий и требовательный, но справедливый и вовсе не злопамятный.

THE OUTSTANDING SCIENTIST AND THE ARDENT PATRIOT

(To Hovsep Orbeli's 110 birth anniversary)

Doctor of his: sciences, professor P. M. MURADIAN

S u m m a r y

Hovsep Abgar Orbeli inherited national self-awareness from his grand ather, aspiration to justice from his lawyer father, and his mother from the Argutlan-Dolgorukov family by origin, gave her son royal nobility and dignity. His studies in Tiflis gymnasium and the private lessons he took gave him deep knowledge of classic languages. With such a background 17-year-old Hovsep Orbeli entered simultaneously the two faculties of the Petersburg University: the classic philology and the oriental studies. The theme of his diploma was an investigation of the classic authors' data on Caucasus nations. Since student years Orbeli had become N. Marr's pupil and follower in the sphere of archaeology, he took part in the excavations of Ani. In 1909 Hovsep Orbeli began to form the summary of the history of art, continuing together with G. Hovsepian the traditions of the famous art-critic Ya. Smirnov's school. In 1924 the results of Orbeli's research works on archaeology (Ani, Van), ethnography (Mox), epigraphy (manuscripts of Bagavan, Bagaran, Ghars, Marmashen, Mren, Nakhchivan, Etchmiadzin, etc.), art (subjects from Ani, Artsakh), and philology (research on the Greek-Latin resources, the translation of „The Book of Problems“ by Shirakatsi) were published. The scientific expeditions in Dagestan, the excavations of Amberd fortress, the work of the sasanid and seljuk art, the translations of Eghishe and Parpetsi's works, the translation and the monographic studies of the fables by Mkhitar Gosh, the search on the Armenian heroic epos and the rustvelology, and „The Summary of the Epigraphy of Ani“ essentially enriched the native academic science. Being the director of the Hermitage, he organized thematic exhibitions, scientific sessions and conferences, and then, during the years of the Great Patriotic War he personally headed the evacuation of the treasure. A patriot, an internationalist, and an orator by nature, during the war he appealed to the soldiers with the call to defend the motherland. Selflessly, he stayed and worked for a long time in the beleaguered Leningrad. After the victory he took part in Nuremberg process as a prosecutor. He was the organizer and the first president of the Academy of Sciences of Armenia. Hovsep Orbeli was an unusually bright personality, a unique speaker, a patriot by nature, a man of principles, frank, selflessly devoted to his work, strict and exigent but fair and not rancorous.